

դասակցիլ ընդ երեցուն նախայիշեալ կարգաց Փռանկ եւ Ալաման ձիաւորաց. եւ հարկ է՝ թէ մեծաւ խնամով եւ թոշակօք դարմանէին յարքունուստ. այլ, ցաւէ՛, զի չեհաս առ մեզ ստոյգ ծանօթութիւն օրինաց եւ հրահանգաց մերայոցս զինուորութեան<sup>125</sup>։- Դարձեալ, որպէս անդ բնաշխարհն Հայոց ինքնին բերէր եւ բուծանէր զընտիր ազգ ձիոց, նոյն եւ աստ սահմանք Կիլիկիոյ եւ Կապպադովկիոյ<sup>126</sup>։

Ձատ յաւագ պաշտօնէից պետութեանն եւ ՚ի դատաւորաց եւ ՚ի քաղաքատեսչաց, յայտ է թէ առանձին դասք պաշտօնէից եւ սպասաւորաց էին յարքունիս, գորոց ոչ ճանաչեմ զկարգ եւ զանուանս, այլ համարիմ թէ ըստ աւագասէր եւ ամենայարդար բարուց Լեւոնի, եւ ըստ ծանօթութեան բիզանդական պալատան (ուր եւ եկաց ժամանակ մի), այլ եւ արեւմտեայցն՝ (Երուսաղէմին եւ Կիպրոսի), բազմութիւն եւ բազմադաս էին դրանիկքն եւ ճորտք արքունի։- Վասն Հեթմոյ Ա գրէ ոմն ՚ի փռանկ հիւրոց նորին՝ հինգհարիւրի չափ պաշտօնեայս կամ սպասաւորս ունել յարքունիսն։ Նմին համեմատ իմանալի է եւ զտուն Թագուհւոյն. որոյ՝ զատ յաւագ պաշտօնէից եւ ՚ի նաժշտաց, այլ ոմն հիւր յարքունիս Լեւոնի Բ,

---

<sup>125</sup> Ապուլֆետա պատմիչ արաբացի (՚ի Տարեգրութեան 1113 ամի), ասէ սովորութիւն Հայոց՝ տալ ռոճիկ ձիաւորի 12 ոսկի ամսական, իսկ հետեւակի՝ 3 միայն. եւ թէ այսպէս առնէր տիկինն մեծի իշխանին Գող Վասլի, յետ մահուան առն իւրոյ։

<sup>126</sup> Մինչ չեւ էր արաբացի երիվարաց հանդիսացեալ յասպարէզս դաշտաց եւ դպրութեանց, երիվարաց Հայոց վիճակեալ էր հոչակ առաջնութեան, ըստ դասական մատենագրաց. որք երկոքուրբք այսոքիւք գերազանցեալ գրեն զՀայոց գօրականն, Աղեղնաւորութեամբ եւ Ձիաւորութեամբ. եւ որպէս առաջնոյն՝ գնոյն ինքն զնախահայր իւրեանց՝ զՀայկն՝ աւանդեն հնարող սերունդք նորին, ոչ է անդէպ գնոյն եւ վասն հեծելութեան ասել, որոց՝ վկայի եւ ՚ի տոհմային պատմութենէ, մի ՚ի սիրելագոյն զբօսանաց եւ մոլութեանց՝ ձիասիրութիւնն կամ ձիավարութիւն. մոլութիւն՝ յորմէ հարկ եղեւ բազում անգամ զգաստից առաջնորդաց զգուշացուցանել եւ զեկեղեցականս՝ նաեւ զբարձրագահս. որպէս Սուրբն Ն. Շնորհալի՝ ազդէր եպիսկոպոսաց իւրոց, զի «Նա եւ յընթացս ոչ երեւելի եւ կազմեալ երիվարօք եւ կամ կիսիշօք՝ ամբարձեալ եղիցին ՚ի բարձրն կոյս... եւ ոչ սրընթաց ձիովք շահատակեալ եւ խրոխտանալով... որպէս լսեմք զոմանց թէ իցեն»։ Այլ եւ ինքն հեզահամբոյրն այն հայրապետ, որ թուէր աղանոյ թելօք միայն օղապարել, ոչ անգիտակ հրապուրանաց եւ խիզախման աղեղնաւորութեան եւ ձիաւորութեան, կամելով երբեմն ընծայել ինչ արժանաւոր կայսեր Կ. Պօլսի (Մանուէլի), առաքէր երիս նժոյգս եւ երիս աղեղունս, յայտ է թէ ամենաընտիրս եւ ամենարուեստս, թերեւս արաբիկս եւ դամասկիկս, պատշաճ եւ հակիրճ ուղերձիւ, ըստ իւրումն շնորհաբանութեան։- Այսպիսոյ անձին այսպիսի յիշատակ, զոր մոռացեալ էր մեր յետուլ ՚ի վարս նորին, (*Շնորհալի եւ Պարագայ իւր*), անմեղադիր արասցէ զմեզ, եթէ սակաւ ինչ զարտուղել թուիցիմք յ՝առաջադրեալ նպատակէս։